Տ. ԵՂԻՇԷ ԱՒ. ՔՀՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ 1945 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին հազար եօթ հարիւր-ամեայ իր գոյութեան ընթացքում եղել է ոչ միայն հայ ժողովրդի քրիստոնէական հաւատքի, ազգային-եկեղեցական, հովուական, քարոզչական գործունէութեան կազմակերպողը, այլեւ հայ դպրոցի եւ ազգային գրաւոր մշակոյթի ստեղծողն ու պահպանողը: Հայ ժողովրդի համար չորրորդ եւ հինգերորդ դարերը եղան ճակատագրական՝ բաւական է յիշել քրիստոնէութեան ընդունումը եւ ազգային գրերի ստեղծումը: Հոգեւոր ու մտաւոր անդաստանի հանճար Մեսրոպ վարդապետն էր, որ 405 թ. Աստծու օգնականութեամբ եւ իր հզօր տաղանդի շնորհիւ ստեղծեց հայոց գրերը՝ դառնալով նաեւ Արշակունիների մայրաքաղաք Վաղարշապատում, կաթողիկոսարանի հարեւանութեամբ հիմնուած հայալեզու առաջին դպրոցի հիմնադիրը: Հայալեզու դպրոցի եւ կրթութեան կազմակերպման ու ծաւալման գործն ի սկզբանէ կապուած է եղել եւ ղեկավարուել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահակալների կողմից: Նորաստեղծ հայալեզու առաջին դպրոցի շրջանաւարտ վարդապետների հետեւողական պայքարի արդիւնքում էր, որ Ե. դարի սկզբում Հայ Եկեղեցին յաղթող հանդիսացաւ ասորական եւ բիւզանդական ոտնձգութիւնների նկատմամբ: Վաղարշապատում հիմնադրուած առաջին հայալեզու դպրոցից ալիք առ ալիք տարածուեց հայ դպրութիւնը ողջ Հայաստանում: Ճշմարտութիւն է, որ պատմական այդ շրջանից սկսեալ Հայ Եկեղեցին եւ հայ դպրոցը, մի ամբողջութիւն դարձած, առաւել խորացրին եւ ամրացրին քրիստոնէական հաւատքը Հայաստանում, բացառիկ սէր եւ հետեւողական ուշադրութիւն հանդէս բերելով նաեւ հայ դպրոցի եւ ազգային մշակոյթի նկատմամբ: Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի մեծագոյն արժանիքն էր նաեւ, որ նա Գողթան եւ Սիւնեաց գաւառներում դպրոցներից բացի հիմնադրեց նաեւ վանքեր, որ նախապէս ծառայում էին քրիստոնէական բարեպաշտական կեանքին հետեւող ազատ կամքի տէր ճգնաւորներին, որոնք հիմնականում շատ ուժեղ կամքի ու մտքի տէր անձինք էին, ինչպիսին էր նաեւ ինքը՝ Ս. Մեսրոպը, որի տնօրինու-

թեամբ ճգնաւոր վանականներն սկսեցին վանքերում զբաղուել նաեւ մտաւոր ու ֆիզիկական աշխատանքով:

Նմանատիպ վանքերը քիչ ժամանակ անց ազգայնացան եւ դարձան բարձրակարգ հայկական դպրոցներ ու վարդապետարաններ, ուր պատրաստում էին նաեւ մայրենի լեզուով քարոզիչներ, որոնք փոխարինեցին յոյն եւ ասորի քարոզիչներին: Հայ ժողովուրդն ազգային դպրոցի միջոցով ձեռք բերեց հզօր պաշտպանական վահան, որի օգնութեամբ կարողացաւ պահել ոչ միայն իր ինքնութիւնը եւ ազգային մշակոյթը, այլեւ քրիստոնէութիւնը, որը մինչ այդ քիչ հասկանալի էր հայ ժողովրդին: Դպրոցի ու մշակոյթի ազգայնացումը դրական պայմաններ ստեղծեց Եկեղեցու հզօրացման եւ մեր ազգային ոգին ու դիմագիծն անաղարտ պահելու գործում: Մինչեւ 485 թ. Ս. Էջմիածնի դպրոցը շուրջ 50 տարի մնաց Մայր Աթոռում: Յովհաննէս Ա. Մանդակունի (478-490 թթ.) կաթողիկոսի ժամանակ Հայրապետական Աթոռի հետ 485 թ. դպրոցը նոյնպէս փոխադրուեց Դուին: Հետագայում Ս. Էջմիածնի դպրոցը տեղափոխուեց Արգինայ 947 թ., Անի՝ 992թ., Ծամընդաւ՝1072 թ., Ծոփք դղեակ՝1161 թ., Հռոմկլա՝ 1149 թ., Սիս՝ 1293 թ. եւ 1441 թ.: Երբ Հայրապետական Աթոռը ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ Ս. Էջմիածին վերադարձուեց, Ս. Էջմիածնում Թովմա Մեծոփեցի վարդապետի ուսուցչապետութեամբ բացուեց նաեւ Ս. Էջմիածնի դպրոցը: Երջանկայիշատակ Փիլիպոս Ա. Աղբակեցի (1632-1635 թթ.) կաթողիկոսի նախաձեռնութեամբ Ս. Էջմիածնում բացուեց վարդապետարան: Նրա հրամանով այդ ուսումնական հաստատութեանը միացան նաեւ Նորավանքի դպրոցի սաները: Ս. Էջմիածնի դպրոցն իր գոյութիւնը պահեց շուրջ երկու դար (հետագայում այդ վարդապետարանը կոչուել է Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոց): Այս դպրոցում տարբեր ժամանակներում դասաւանդել են դարի ճանաչուած գիտնական վարդապետները՝ Ոսկան Երեւանցին, Ստեփանոս Լեհացին, Առաքել Դաւրիժեցին, Սիմէոն Ջուղայեցին եւ դեռ ուրիշ անուանի վարդապետներ: Այստեղ աւանդել են կրօն, հայոց լեզու, փիլիսոփայութիւն, տրամաբանութիւն, քերականութիւն: Ժառանգաւորաց դպրոցի հեղինակութիւնը շատ է բարձրացել Սիմէոն Ա. Երեւանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսի ժամանակ: Յատուկ այս Ժառանգաւորաց դպրոցի կարիքները հոգալու նպատակով Ներսես Աշտարակեցի (1843-1857 թթ.) մեծանուն կաթողիկոսը Մայր Աթոռի բակում ժամանակի պահանջներին համապատասխան 50 ուսանողի համար նախատեսուած դպրոցական շէնք է կառուցում: Եւ երբ Գեւորգ Դ. կաթողիկոսի կողմից (1866-1882 թթ.), աւարտվեց Գեւորգեան հոգեւոր ճեմարանի շէնքի կառուցումը (1874 թ.), Ս. Էջմիածնի ժառանգաւորացի

ուսանողները դարձան Գեւորգեան հոգեւոր ճեմարան ընդունուած առաջին սաները:

Փառապանծ Գէորգեան հոգեւոր ճեմարանը 43 տարիների բեղուն գործունէութեամբ դարձաւ մտաւոր այն դարբնոցը, ուր ոչ միայն կրթուեցին աստուածաբանական, հայագիտական, լեզուների իմացութեամբ, այլեւ ճանաչուած ուսումնական հաստատութիւնը մեր եկեղեցուն, ազգին եւ հայրենիքին տուեց հայ մշակոյթի, գիտութեան, գրականութեան, բանասիրութեան, պատմութեան, երաժշտութեան, նոյնիսկ ազգային-ազատագրական եւ պետական գործիչների մի ամբողջ փաղանգ: Շատ տպաւորիչ է Գէորգեան հոգեւոր ճեմարանի ժառանգութիւնը, որով Մայր Աթոռն իրաւամբ կարող է հպարտանալ: ԺԹ. եւ Ի. դարերում հայկական դպրոցների ուսուցիչների մեծամասնութիւնը ճեմարանաւարտներ էին: Նրանք հայ դպրոցը բարձրացրին նոր մակարդակի:

Առաջին աշխարհամարտի ընթացքում մեր ժողովրդի կեանքում ստեղծուած քաղաքական, ընկերային-տնտեսական ծանր վիճակը, ցեղասպանութիւնն իր ողջ հետեւանքներով, ստիպեցին Գէորգ Ե. կաթողիկոսին 1917 թ. դեկտեմբերի 21-ին ժամանակաւորապէս դադարեցնել հոգեւոր ճեմարանի դասերը եւ շէնքը տրամադրել զինուորական հրամանատարութեանը: Երջանկայիշատակ Գէորգ Ե. հայրապետը մինչեւ իր մահը՝ 1930 թ., Հոգեւոր ճեմարանը վերաբացելու մի քանի վճռական քայլ կատարեց: 1922 թ. նրա հրամանով Խորէն արք. Մուրադբէկեանը եւ Գէորգ արք. Չորէքչեանը բանակցութիւններ են վարում Խորհրդային Հայաստանի յեղկոմի նախագահ Ս. Կասեանի հետ, բացատրում նրան Էջմիածնի ուրոյն դիրքը հայ ժողովրդի կրթական գործում եւ պահանջում են «թոյլ տալ բանալ հոգեւոր բարձրագոյն դպրոց»: Այս խնդիրը մնաց անպատասխան: Նոյն թուականին Տ. Խորէն եւ Տ. Գէորգ արքեպիսկոպոսների միջոցով ճեմարանի վերաբացման համար դիմում են Խորհրդային Հայաստանի պետական առաջին պաշտօնեաներից Աշոտ Յովհաննիսեանին: Աշոտ Յովհաննիսեանը Մայր Աթոռի ներկայացուցիչներին պատասխանում է. «Ես շատ լաւ գիտեմ Էջմիածնի եւ հայ հոգեւորականութեան կատարած գործը: Նա ամբողջացրել, միացրել է հայ ժողովուրդը, նա ստեղծել է գիր ու դպրութիւն եւ կառավարել է հայ ժողովուրդը: Այս մենք գիտենք եւ ահա այս իրաւունքներն են, որ մենք խլում ենք Էջմիածնից» («Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», Խորէն Ա., էջ 124): Հոգեւոր ճեմարանը վերաբացելու Մայր Աթոռի խնդրանքին Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան պատասխանը, մեղմ ասած, իմաստազուրկ էր:

Ամենայն Հայոց Մայր Աթոռի եւ Հայաստանեայց Եկեղեցու վիճակը Ի. դարի 30-ական թթ. աւելի քան յուսահատական էր դառնում: Իշխանութիւնները հնարաւոր բոլոր միջոցներով փորձում էին Հայ Եկեղեցին եւ հոգեւոր դպրոցը ջնջել սերունդների յիշողութիւնից: Այսպիսի անելանելի վիճակ էր Մայր Աթոռի համար, երբ 1938 թ. օգոստոսին խիստ գաղտնի պաշտօնական մի գրութեամբ Հայաստանի կոմունիստական իշխանութիւնը զեկուցում է Ստալինին՝ խնդրելով թոյլատրել Էջմիածնի տաճարը թանգարանի վերածելու իրաւունք, մանաւադ որ, ասւում էր փաստաթղթում. «Էջմիածնի կաթողիկոսարանում աշխատում էին 70-75 հոգեւորականներ, շատերն արդէն զանազան մեղադրանքներով ձերբակալուել են մեր կողմից ակտիւ հակայեղափոխական աշխատանքի համար»: Հայաստանեայց Եկեղեցու անդաստանը հայրենիքում եւ մանաւանդ Մայր Աթոռում գրեթէ ամայացել էր իր սպասաւորներից: Դժուար է պատկերացնել աւելի վատ իրավիճակ Մայր Աթոռի եւ Հայ Եկեղեցու համար, քան իրականում կար այդ ժամանակ:

1939 թ. սկսուեց երկրորդ աշխարհամարտը, որը 1941 թ. յունիսի 22-ին իր բոցերի մեջ առաւ Խորհրդային Միութիւնը: Քառամեայ (1941-1945 թթ.) պատերազմի ընթացքում Մայր Աթոռն իր համեստ, բայց արժանի ներդրումն ունեցաւ հայրենիքի փրկութեան նուիրական զոհասեղանին: 1944 թ. յետոյ նկատելի էր, որ դանդաղ, բայց արդէն սկսուել էր քաղաքական սառցահալքը Մայր Աթոռի եւ Հայ Եկեղեցու նկատմամբ: 1945 թ. ապրիլի 5-ին հնարաւոր եղաւ հայրապետական տեղակալ Գէորգ արք. Չորեքչեանի հանդիպումը Ստալինի հետ, որին ներկայացուեց 11 կէտերից կազմուած մի դիմումնագիր, որի առաջին կէտը վերաբերում էր Հոգեւոր ճեմարանի վերաբացմանը: Այս կէտի վերաբերեալ ապագայ ազգընտիր Հայրապետը գրելու էր. «Ս. Էջմիածինը, որպէս համայն հայութեան կենտրոն, պիտի ունենայ բաւարար թուով կուսակրօն հոգեւորականութիւն եւ քահանայութիւն: Հոգեւոր դաս պատրաստող հաստատութիւնը Մայր Աթոռի Հոգեւոր ճեմարանն էր, որը դադարել է գոյութիւն ունենալ 1917-ից, որի հետեւանքով մեծ կարիք է զգացւում թէ՛ կուսակրօն հոգեւորականութեան, եւ թէ՛ քահանայութեան, մանաւանդ միութենական ներքին թեմերում եւ Մայր Աթոռում»:

Գէորգ Զ. հայրապետի ծրագրում հիմնարար եւ հրատապ խնդիրներից էր հոգեւոր ճեմարան ունենալու հարցը, որպէսզի Ս. Էջմիածինը կարողանայ պատրաստել զարգացած, ձեռնահաս եկեղեցականներ: Շատ դժուարութեամբ, բայց օրինական ճանապարհով երջանկայիշատակ հայրապետը կարողացել էր լուծում տալ կարեւոր այդ հարցին: Իր ընտրութիւնից անմիջապէս

յետոյ, առանց ժամանակ կորցնելու, սկսեց Հոգեւոր ճեմարանի վերաբացման նախապատրաստական աշխատանքները:

Չպետք է մոռանալ, որ Հայ Եկեղեցին Ի. դարի 30-ական թուականներից ապրեց իր պատմութեան ամենամռայլ ժամանակաշրջանը, երբ սկսուեց եկեղեցականների հալածանքն ու բռնութիւնը: Մայր Աթոռի 80-ից աւելի ճեմարանաւարտ համալսարանական կրթութեամբ գիտնական միաբանների աքսորումով ու գնդակահարումով դատարկուել էին Մայր Աթոռն ու Հայ Եկեղեցին իր սպասաւորներից: Մեծագործ Հայրապետի շրջահայեաց գործունէութեամբ հնարաւոր եղաւ ոչ միայն կանգնեցնել պետական մակարդակով եկեղեցականների նկատմամբ հալածանքն ու աքսորավայրեր քշելը, այլեւ հնար եղաւ արիւնաքամ մեր Ս. Եկեղեցու համար նոր լուսաբաց ապահովել, որը կարելի է զարթօնք անուանել: Սկսուած զարթօնքի երաշխիքը բնականաբար Հոգեւոր ճեմարանի վերաբացումն էր: Հակառակ բոլոր դժուարութիւններին՝ Վեհափառը հրահանգեց, որ 1945 թ. նոյեմբերի 1-ին կատարուի Հոգեւոր ճեմարանի վերաբացումը: Այն տեղի ունեցաւ նախկին մատենադարանի շենքում: Ճեմարան ընդունուած առաջին սաների թիւը 35 էր: 1945 թ. նոյեմբերի 1-ը օրացոյցային սովորական օրերից մէկն էր, բայց այն մտաւ Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի պատմութեան մեջ որպէս Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի վերաբացման օր: Հոգեւոր ճեմարանի վերաբացման օրը յաջող քննութիւններ յանձնած ապագայ 35 սաներս հաւաքուել էինք Մայր Աթոռի նախկին մատենադարանի առջեւ եւ սրտատրոփ սպասում էինք ճեմարանի բացման պաշտօնական արարողակարգին: Բոլորիս մօտ նկատելի էր անբացատրելի լարում, մտահոգութիւն: Արտաշէս Դիլոյեան անուն-ազգանունով միջին տարիքի մի անձնաւորութիւն (նախկին ճեմարանաւարտ, որ զբաղւում էր իրաւաբանութեամբ) մեզ առաջնորդեց մատենադարանի երկրորդ յարկի գեղեցիկ եւ ընդարձակ սենեակներից մէկը: Տեղաւորուեցինք եւ շունչներս պահած սպասում էինք: Ազդարարեցին Վեհափառի գալուստը: Նորին Սրբութեանը ուղեկցում էին եպիսկոպոսներ եւ Գերագոյն հոգեւոր խորհրդի աշխարհիկ անդամներ՝ Աւետիք Իսահակեանը, Ստեփանոս Մալխասեանը, Դերենիկ Դեմիրճեանը, ազգագրագէտ Երուանդ Շահազիզը: Բոլորն ուրախ էին, որովհետեւ վերաբացւում էր Մայր Աթոռի եւ Հայաստանեայց Եկեղեցու համար հրատապ ու չափազանց կարեւոր հաստատութիւնը՝ Հոգեւոր ճեմարանը:

Հայոց Հայրապետը, խորաթափանց հայեացքի ներքոյ պահելով մեզ, սկսեց «Հայր մեր»-ը, յետոյ մի աղօթք ասաց, ապա սկսեց Ճեմարանի շենքի, լսարանի, առաջին ուսանողների եւ ներկայ դասախօսների օրհնութեան կարգը: Վեհափառ Հայրապետի աչքերից ուրախութեան արտասուք էր հոսում.

«Օրինեսցի եւ սրբեսցի նորաբաց հոգեւոր Ճեմարանս եւ դասախօսական կազմս...»:

Յուզուած էին նախագահութիւնում նստած հայոց մեծերը: Օրինութեան աւարտից յետոյ բացման խօսքով հանդէս եկան Հոգեւոր Ճեմարանի նորանշանակ տեսուչ Մինաս Մինասեանը, Գերաշնորհ Տ. Ռուբէն եպս. Դրամբեանը եւ Ներսես եպս. Աբրահամեանը, որոնց խօսքում, Վեհափառին շնորհաւորելուց զատ, շեշտադրում կար այն մասին, որ նորաբաց Հոգեւոր ճեմարանը ուղղակի շարունակութիւնն է նախկին ԳՀՃ-ի, մէկ տարբերութեամբ լոկ, որ նախկին Ճեմարանն ուսման մէկ ուղղութիւն ունէր միայն՝ սաները պատրաստւում էին հոգեւոր սպասաւորութեան, իսկ այժմ՝ կրթութիւնն աւարտելով ծառայելու էին նաեւ հայագիտական բնագաւառում եւ շրջանաւարտ լինելուց յետոյ գնալու էին հայկական դպրոցներ:

Այսօրուայ Ճեմարանը, շեշտում էին բանախօսները, ազատուած է նախկին ծանրաբեռնուածութիւնից: Նորաբաց Հոգեւոր ճեմարանի առջեւ դրւում էին պահանջներ ու պարտականութիւններ, որոնք բխում էին հայ եկեղեցու շահերից՝ պատրաստելու կիրթ, հայրենասէր եւ եկեղեցասէր հոգեւորականներ:

Հանդիսութեան աւարտին խօսեց Գէորգ Ջ. Վեհափառը, որի խօսքը բաւական ծաւալուն էր: Նա նստած էր խօսում, մի պահ ոգեւորուեց, ոտքի ելաւ եւ յոտնկայս իր խօսքը շարունակեց: Ինձ համար անհնար է 69 տարուայ հեռաւորութիւնից բառացի վերականգնել 77-ամեայ ծերունազարդ իմաստուն այդ մեծ Հայրապետի խօսքը: Կարող եմ յիշել, որ Վեհափառը խօսում էր մեղմ, իմաստալից, որի խօսքից յուզուել էին բոլորը: Նա յատուկ շեշտադրում էր՝ որ հրամայական է մեզ համար Ս. Էջմիածնի նորաբաց Հոգեւոր ճեմարանում առանց յապաղելու սկսել ընթացքը եկեղեցականների պատրաստման: «Ուշացել ենք, շատ ենք ուշացել»,- բարձրաձայնում էր Հայոց Հայրապետը: Խօսքի աւարտին յատուկ շեշտով ասաց, թէ այսօրուայ ճեմարանաւարտները չպէտք է լինեն նեղմիտ կղերականներ, այլ պէտք է ծանօթ լինեն ու սիրեն եւ ուսումնասիրեն մեր ժողովրդի անցեալի պատմութիւնն ու մշակոյթը: Չափազանց լաւատես էին բոլորը, որ հէնց գալիքի այս ճեմարանցիներն էին, որ պիտի ոտքի կանգնեցնէին մեր Եկեղեցին, համալրէին նօսրացած շարքերը նոր խոստումնալից, շնորհալի երիտասարդ եկեղեցականներով: Վեհափառը աղօթքով եզրափակեց հանդէսը, չափազանց լաւատեսական շեշտադրմամբ, բարի երթ եւ յաջողութիւն մաղթելով նորաբաց ճեմարանին:

Հանդիսաւոր բացման արարողութիւնից յետոյ ներկաները շնորհաւորում էին միմեանց, յիշում ու յիշեցնում էին նախկին Ճեմարանի վիթխարի ներդ-

րումը հայ հոգեւոր անդաստանում, դպրութեան, գիտութեան եւ մանկավարժութեան բնագաւառներում: Ցանկութիւններ էին հնչում, որ ապագայում նորաբաց Ճեմարանը նոյնպէս պէտք է դարձնել հոգեւոր մտքի կաճառ:

Հոգեւոր ճեմարանի դասերն սկսուեցին յաջորդ օրը՝ նոյեմբերի 2-ին: Որպէս գիշերօթիկ ուսումնական հաստատութիւն, հակառակ երկրի ծանր տնտեսական վիճակին, Մայր Աթոռը նորաբաց Ճեմարանի սաներին, այնուամենայնիւ, ապահովել էր զգեստով, սննդով, գրենական պիտոյքներով: Կային նաեւ անհետաձգելի լուծում պահանջող կարեւոր խնդիրներ: Աւարտուած չէր ննջարանների համար նախատեսուած սենեակների նորոգումը: Չկար խոհանոց եւ սեղանատուն: Ողջ տարուայ ընթացքում ուսանողների ճաշերը պատրաստում էին վեհարանի խոհանոցում: Սրահը, որը նախատեսուած էր սերտողութեան՝ դասապատրաստման համար, ծառայում էր նաեւ որպէս սեղանատուն: Առաջին ուսումնական տարում աւանդուող առարկաների թիւը 11 էր, որոնցից մեզ համար նորոյթ էին գրաբարը, Հայ Եկեղեցու պատմութիւնը եւ Հին ուխտի պատմութիւնը: Ամավերջեայ քննութիւններից առաջ իմացանք, որ Վեհափառը ներկայ է լինելու բոլոր քննութիւններին: Առաջին քննութիւնը Վեհափառի եւ Գերագոյն հոգեւոր խորհրդի աշխարհիկ մի քանի անդամների ներկայութեամբ յանձնեցինք մի քիչ անվստահ: Յաջորդ քննութիւններին հասկացանք, որ Վեհափառի ներկայութիւնն զգաստացնում էր դասախօսներին, իհարկէ նաեւ մեզ՝ ուսանողներիս, աւելի լաւ պատրաստուելու: Քննութիւններն անցնում էին անկաշկանդ եւ բարձր որակով:

Երկրորդ դասարան փոխադրուեց միայն 24 սան: Մնացած 11-ն ինչ-ինչ պատճառներով դուրս մնացին Ճեմարանից:

Երկրորդ ուսումնական տարում Հոգեւոր ճեմարանն ուներ շուրջ 47 ուսանող, որոնք բաժանուած էին Ա. եւ Բ. դասարանների վրայ: Աւանդուող առարկաների թիւը բարձրացաւ 17-ի: Երկրորդ դասարանում ունեցանք մի քանի ճանաչուած, նախկին ճեմարանաւարտ դասախօսներ՝ Աշոտ Աբրահամեան, Առաքել Առաքելեան, Ասլան Շահնազարեան, որոնք Վեհափառի թելադրութեամբ ուսանողների մէջ սերմանում էին սէր եւ հպարտութիւն ոչ միայն Ճեմարանի, այլեւ մեր Եկեղեցու եւ ազգի հազարամեայ պատմութեան, մեր մշակոյթի նկատմամբ: Երկրորդ դասարանում վերականգնուեց նախկին Ճեմարանից շատ օգտակար մի աւանդոյթ: Դասերից յետոյ մեր դասախօսների, անհրաժեշտութեան դէպքում՝ նաեւ դրսից հրաւիրուած մասնագէտների կողմից կազմակերպւում էին զեկուցումներ տոմարագիտութեան վերաբերեալ, գրականութիւնից, պատմութիւնից, աշխարհագրութիւնից: Ունենում էինք գրական-գեղարուեստական երեկոներ, որտեղ հանդէս

էին գալիս հիմնականում ուսանողները: Երեկոյթները նուիրուած էին լինում ազգային-եկեղեցական տօներին եւ հայ մշակոյթի ճանաչուած գործիչներին: Ուսանողական երեկոյթների արդիւնքն այնքան ակնյայտ էր, որ տեղական իշխանութիւնը կոմերիտական կազմակերպութիւնների միջոցով փորձում էր խոչընդոտել: Կոմերիտականները մօտենում էին մեզ, զրուցում եւ փորձում էին ներազդել մեզ վրայ, թէ մենք «մոլորուածներ» ենք, որ վանքի «խաւարասէր, հետամնաց» միջավայրը հեռացնում է ճեմարանցիներին կոմունիզմ կառուցող հասարակութիւնից: Այդ տարիների կուսակցականների եւ կոմերիտականների անհարկի միջամտութիւնների եւ շատ յաճախ նաեւ հարկադրանքի արդիւնքում Հոգեւոր ճեմարանից տարբեր միջոցներով դուրս էին բերում ուսանողներին. սրանց թիւը դժբախտաբար շատ էր: 1950-1951 թթ. աւարտական քննութիւնները յանձնելուց յետոյ, Գէորգ Վեհափառի յանձնարարութեամբ, ամավերջեան փակման հանդեսը տեղի ունեցաւ Օշականում: Կարծէք թէ նախախնամութեան միջամտութիւնը կար, որ մենք որպէս աւարտական կուրսի սաներ ծունկի պիտի գայինք մեզ համար ամենավաւերական սրբի՝ Մեսրոպ Մաշտոց մեծ վարդապետի սրբազան շիրիմի առջեւ՝ երդուելու, որ լինենք աշխատասէր, հայրենասէր, եկեղեցասէր՝ ձգտելով օրինակ դառնալ մեզանից յետոյ եկող ուսանողներին: Վեհափառը ներկայ հաւատացեալներին, դասախօսներին ու ուսանողներին բացատրեց թարգմանչաց տօնի խորհուրդը եւ խօսքը մասնաւորելով՝ դիմեց ճեմարանի առաջին շրջանաւարտներին՝ ասելով. «Թող Ս. Մեսրոպը օգնի բոլորիդ: Հեռո՛ւ ձեզնից ծուլութիւնն ու անհամեստութիւնը, անհոգութիւնն ու մեծամտութիւնը, եղէ՛ք աւելի պատրաստուած հոգեւոր եզակի այս ասպարէզը մտնելու համար»:

1951 թ. մայիսին յաջողութեամբ պաշտպանեցինք նաեւ մեր աւարտաճառերը: Հրաժեշտ տուինք Հոգեւոր ճեմարանին, ուսանողական համազգեստը փոխարինեցինք եկեղեցականի հանդերձով, սարկաւագական աստիճանով մտանք Մայր Աթոռի միաբանութեան նօսրացած շարքերը: Ճիշտ է՝ Հոգեւոր ճեմարանի լրիւ դասընթացը աւարտեցինք, բայց մեզ պակասում էր հոգեւոր գիտելիքը: Գէորգ Զ. Վեհափառը Անթիլիասից Մայր Աթոռ հրաւիրեց դպրեվանքի տեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպս. Փոլադեանին, որը երեք ամսուայ ընթացքում 20-25 դասախօսութիւնների միջոցով մեզ փոխանցեց կրօնական եւ աստուածաբանական որոշ գիտելիքներ:

1954 թ. մայիսի 9-ին վախճանուեց Գէորգ Զ. հայրապետը, որի մահով աւարտուեց նաեւ Հոգեւոր ճեմարանի առաջին ինը տարիների գործունէութիւնը:

Հոգեւոր ճեմարանի պատմութեան երկրորդ շրջանն սկսւում է 1955 թ. հոկտեմբերից, երբ Լուսաւորչի Աթոռի գահակալ ընտրուեց Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը: Երջանկայիշատակ Գէորգ Զ. Կաթողիկոսի մահից յետոյ դժբախտաբար կաթողիկոսական տեղապահ նշանակուեց Վահան արք. Կոստանեանը, որը իր առաջին հրամանով Հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտօնից ազատեց վաստակաշատ Մինաս Մինասեանին, որն առաջին տեսուչն էր Հոգեւոր ճեմարանի եւ նոյնիսկ 1945 թ. ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընտրուած էր Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ: Փորձուած այս մանկավարժն էր, որ գործի դնելով իր մանկավարժական եւ իրաւաբանական ողջ գիտելիքները, նախորդ դաժան եւ դժուարագոյն ինը տարիների ընթացքում, ղեկավարութեամբ Գէորգ Զ. մեծագործ Կաթողիկոսի, Ճեմարանը դարձրեց կայացած ուսումնական հաստատութիւն:

Տեսչութեան պաշտօնին կոչուեց 70-ամեայ ոմն Մարտիրոս Տէր-Ստեփանեան, որը երբեք մանկավարժութեամբ ու դպրոցով չէր զբաղուել: Չկայացած, անփորձ այս տեսուչը չկարողացաւ կազմակերպել 1955-1956 ուստարուայ ընդունելութեան գործընթացը: Ճեմարանում ուսանողների քանակը հասել էր 20-ի: Փառք Աստծու, որ Մ. Տէր-Ստեփանեանը ուսումնական տարին չաւարտած՝ ազատուեց տեսչի պարտականութիւնից:

Վազգէն Վեհափառն ամենայն մանրամասներով տեղեակ էր Վահան արքեպիսկոպոսի անօրինական, ոչ կառուցողական հրամաններին, որի արդիւնքում Հոգեւոր ճեմարանը գտնւում էր չափազանց ծանր վիճակում: Վազգէն Հայրապետի առաջին՝ 1955 թ. այցելութիւնը Հոգեւոր ճեմարան նշանաւորուեց նոր արդիւնքով: Նոր ուսումնական տարուայ համար տնօրինեց, որ Ճեմարան ընդունուեն 30 նոր սաներ, որով սաների թիւը պիտի հասնէր 50-ի: Ծրագիրն իրագործուեց յաջողութեամբ: Նորին Սրբութիւնը, ծանօթանալով ուսումնական ծրագրերին, որոշ դիտողութիւններ կատարեց. ծրագրում աւելացուեցին փիլիսոփայութիւն եւ հոգեբանութիւն առարկաները եւ ինքն անձամբ ստանձնեց նշուած երկու առարկաների դասաւանդումը, որ շարունակեց մինչեւ իր երկրային կեանքի աւարտը: 39 տարի նա մնաց Հոգեւոր ճեմարանի ուսուցիչն ու ուսուցչապետը, սիրող հայրը եւ մեծ դաստիարակը: Հնարաւոր բոլոր միջոցներով նպաստեց ուսման մակարդակի բարձրացմանը, որպէսզի «Այսօրուայ մեր համեստ ու երկչոտ պատանիները տարիներ յետոյ մարմնով աճած ու հոգով զինուած՝ հաւատքով, շնորհներով լի՝ դառնան մշակներ Տիրոջ այգու մեջ:

Ճեմարանում իր զբաղուածութեան մասին Վազգէն Վեհափառն ասում էր, որ ինքն անձամբ պիտի ճանաչի սաներին, մանաւադ նրանց, որոնք սպասա-

ւորները պիտի դառնային մեր Ս. Եկեղեցու: Երջանկայիշատակ Հայրապետը 1955 թ. Ճեմարանում վերականգնեց օգտաշատ այն աւանդոյթը, որ չէր գործադրում Գէորգ Զ. Կաթողիկոսի մահից ի վեր: Ուսանողների մտաւոր եւ հոգեկան կարողութիւնների առողջ աճի համար կազմակերպւում էին արտադասարանական դասախօսութիւններ, երեկոներ, հանդիպումներ գրական ու մշակոյթի գործիչների հետ: Լինում էին այցելութիւններ համերգասրահներ, թանգարաններ, կազմակերպւում էին զբօսաշրջաներ: Վերատեսուչ Վեհափառի հրամանով վերականգնուեց ուսանողական կարեւոր այդ սովորոյթը, որը գալիս էր նախորդ Ճեմարանից: Ամաւերջին փակման հանդէսին Վազգէն Վեհափառն իր դժգոհութիւնը յայտնեց դասախօսներին ու տեսչութեանը՝ պահանջելով կրօնական ու հայագիտական առարկաների ուսուցիչներից, որ դասախօսութիւնների մատուցման ժամանակ լինեն ուշադիր ոչ միայն որակի, բայց նաեւ հայրենասիրական ու եկեղեցասիրական մակարդակի բարձրացման գործում: Իր խօսքի վերջում, սաներին դիմելով, ասաց. «Ճեմարանի ուսանողութիւնը պէտք է զինուի սրբազան գիտելիքներով, մայրենիով եւ հայ ժողովրդի պատմութեամբ, որը ճեմարանցու համար պէտք է ըլլայ երկրորդ Աւետարանը: Տարիներ յետոյ, երբ դուք քարոզէք մեր ժողովրդին ձեր մէկ ձեռքին պէտք է ունենաք Յիսուսի Աւետարանը, իսկ միւս ձեռքին հայոց պատմութեան գիրքը: Մեր երազն է, մեր կեանքի նպատակն է շենացնել, ուրախացնել հազարամեայ Ս. Էջմիածինը՝ պարգեւելով անոր հաւատաւոր, անձնուէր սպասաւորներ»:

Վազգէն Վեհափառը 1957 թ. Մայր Աթոռում ստեղծեց տնտեսական, ֆինանսական եւ այլ կարեւոր օղակներ, որոնք պիտի նպաստէին նաեւ Հոգեւոր ճեմարանի անխափան աշխատանքին: Փոխեց Հոգեւոր ճեմարանի ողջ կազմը եւս: Հոգեւոր ճեմարան հրաւիրուեցին բարձրակարգ որակաւորում ունեցող նոր դասախօսներ: Երուսաղէմից որպէս ճեմարանի տեսուչ Մայր Աթոռ հրաւիրուեց Տ. Հայկազուն եպս. Աբրահամեանը, որը տեսչական ղեկին մնաց մինչեւ 1964 թ.: Հայկազուն սրբազանի ներկայութիւնը Ճեմարանում, հոգեւոր եւ ուսման որակի բարձրացման իմաստով, դրական շատ բան փոխեց: Առաջընթացը Ճեմարանում բոլոր առումներով նկատելի էր, ինչը բնականաբար դուր չէր գալիս խորհրդային պաշտօնեաներին, որոնք պատրաստ էին խափանելու դրական տեղաշարժերը Ճեմարանում՝ պայմաններ ստեղծելով լաւագոյն ուսանողներին դուրս բերելու հոգեւոր մեր հաստատութիւնից:

Խստիւ արգելուած էր բարձրագոյն որակաւորում ունեցող դասախօսներին Ճեմարանում պաշտօնավարելը. պատճառաբանութիւնը մէկն էր՝ կոմունիստական կուսակցութեան անդամը չի կարող պաշտօնավարել կրօնական

հաստատութիւնում: Նորին Սրբութիւնն այդ ծանր ժամանակներում կարողացաւ լուծել մի շատ կարեւոր հարց եւս. պետական մակարդակով լուծուեց սփիւռքից ռուսանողներ բերելու խնդիրը: 1972 թ. նշանաւոր եղաւ. Ճեմարան ընդունվեց 14 սփիւռքահայ, որ քանակապէս ու որակապէս փոխեց Հոգեւոր ճեմարանի ընդհանուր պատկերը: Սխալուած չեմ լինի, եթե ասեմ, որ սփիւռքահայ ուսանողները Ճեմարանում հաստատում էին նաեւ Հոգեւոր ճեմարանի՝ համահայկական ճանաչուելու փաստը:

1985 թ. լրացաւ ծերունազարդ Վազգէն Վեհափառի գահակալութեան 30-ամեակը: Ժամանակակիցները լաւ գիտէին նրա տառապանքը եւ անթաքոյց դժգոհութիւնը համայնավարական վերին ատեաններից, որ յաճախ արտայայտւում էր զայրոյթով, նոյնիսկ Ճեմարանը փակելու սպառնալիքով: Համոզուած եմ, որ հայրապետի պաշտօնական բողոքներն ու դժգոհութիւնները սթափեցրին այդ օրերի պետական պաշտօնեաներին, որոնք աւելի ուշադիր դարձան Հայոց Հայրապետի նկատմամբ: Կայունացաւ Հոգեւոր ճեմարանի ընդհանուր վիճակը, եւ այդ նոյն /1988-1989/ վերաբացուեցին շուրջ 27 եկեղեցիներ ու վանքեր /տե՛ս «Էջմիածին», 1989 հոկտ., էջ 28-29/: Բացառիկ այս առիթն օգտագործելով՝ Հոգեւոր ճեմարանի ամաւերջեայ իր ելոյթում ասաց, որ հոգեւոր մշակներ են հարկաւոր նորաբաց եկեղեցիների համար, եւ ապա խօսքը սաներին ուղղելով ասաց. «Այսօր ճեմարանցին պիտի հաշուի առնի դէպի եկեղեցի դարձած մեր ժողովրդի հոգեւոր պահանջներն ու ակնկալիքները: Ս. Էջմիածնի իւրաքանչիւր ուսանող այս գիտակցութեամբ պիտի պատրաստուի իր ապագայ հոգեւոր առաքելութեանը»: 1990 թ. արդէն տեսանելի էր, որ եկեղեցահալած խորհրդային համակարգը ճեղքեր էր տալիս, եւ սկսուել էր ժողովրդավարացման գործընթացը: Ճիշտ այդ ժամանակ Եկեղեցուն վերադարձուեց Սեւանայ թերակղզին իր հնաբոյր վանական ողջ համալիրով:

Արարատեան հայրապետական թեմի երիտասարդ փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արք. Ներսիսեանը /այժմ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց/, լինելով շրջանաւարտը Հոգեւոր ճեմարանի, շատ լաւ գիտէր, որ սահմանափակ թուով ուսանողութիւն ունեցող Հոգեւոր ճեմարանն ի վիճակի չէր բաւարարելու մեր Ս. Եկեղեցու ներկայ եւ մանաւանդ Հայաստանում սկսուած նոր բացուող եկեղեցիների համար հովիւներ ունենալու խնդիրը: Իրապէս բոլորիս համար էլ հասկանալի էր, որ առանց ուժեղ Հոգեւոր ճեմարանի եւ նրա շրջանաւարտների, որին ձգտում էր գերաշնորհի սրբազանը, հնարաւոր չէր լինի գրել մեր նոր շրջանի եկեղեցական պատմութիւնն այնպէս, ինչպէս գրուեց եւ դեռ պիտի գրուի:

Այդ իսկ պատճառով Գարեգին արք.-ը ներկայեանում է սիրելի ուսուցչին՝ Ն. Ս. Վազգէն Վեհափառին եւ յայտնում իր ծրագիրը՝ նախորդ մեծերի՝ Գէորգ Դ. եւ Խրիմեան Հայրիկ կաթողիկոսների օրինակով Սեւանայ թերակղզում դպրանոց վերաբացելու մասին, որի շրջանաւարտները կհամալրէին Հոգեւոր ճեմարանի ուսանողների նօսրացող շարքերը: Վեհափառը մի քիչ թերահաւատ էր, բայց համոզուած էր, որ Գարեգին սրբազանը կը կարողանայ իրագործել ներկայացուած ծրագիրը: Իրեն յատուկ լաւատեսութեամբ Գարեգին սրբազանը, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները, հասու եղաւ, որ 1990 թ. նոր ուսումնական շրջանում Սեւանի դպրանոցն իր դռները բացի առաջին դիմորդների առջեւ: Ներկայումս Դպրանոցը քառամեայ հոգեւոր հաստատութիւն է, որի շրջանաւարտները եւս երկու տարի ուսանում են Հոգեւոր ճեմարանում:

Վազգէն Վեհափառը 39 տարի, որպէս գահակալ Լուսաւորչի սրբազան աթոռի, պայքարեց ու տառապեց, բայց երբեք չզիջեց: Իր յամառ եւ ճիշտ պայքարի ու դիւանագիտութեան արդիւնքում Հոգեւոր ճեմարանին վնաս հասցնելու պետական պաշտօնեաների մարմաջին Հայոց Հայրապետը պատասխանում էր բարութեամբ ու շրջահայեացութեամբ: Փառք ու պատիւ այդ մեծ սրբազան հային, որ դժուարագոյն 90-ական թթ. համայնավարական բիրտ իրականութեան պայմաններում այնուամենայնիւ Հոգեւոր ճեմարանը գրանցում էր փոքրիկ յաջողութիւններ: Որպէս ամենայն Հայոց Հայրապետի՝ իր համար շատ մեծ կարեւորութիւն ունէր ուսանողների հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը, որոնց դաստիարակութեան հարցերով զբաղւում էր բնականաբար Հոգեւոր ճեմարանի տեսչութիւնը, բայց այդ շատ կարեւոր աշխատանքը ղեկավարում էր վերատեսուչ Վեհափառի կողմից: Իր կաթողիկոսութեան վերջին տարում, կեանքի մայրամուտին՝ 1993 թ., Հայրապետն այսպէս էր բնորոշում հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը, որ պէտք է ունենայ Հոգեւոր ճեմարանի իւրաքանչիւր ուսանող. «Առանց Հայաստանի Հայաստանեայց Եկեղեցին կարելի չէ նոյնիսկ ըմբռնել եւ մեր բոլոր արտայայտութիւնների մէջ Հայաստանի շունչը, գաղափարը կայ, պետք է լինի: Այո՛, մեր եկեղեցին անհայրենիք եկեղեցի չէ եղած ի սկզբանէ: Յատկապէս Ս. Մեսրոպ Մաշտոցից այս կողմ կարելի չէ մեր եկեղեցու մեծ իրագործումները յիշել կամ գնահատել առանց հայրենիքի շահի հետ կապելու»:

Իր ողջ հովուապետութեան տարիներին երջանկայիշատակ Վազգէն Վեհափառը երբեք աչքաթող չարեց Հոգեւոր ճեմարանը եւ ճեմարանցուն: Շրջանաւարտների թիւը քիչ էր, բայց նրանք քահանայի, վարդապետի, եպիսկոպոսի աստիճանով առ այսօր ծառայում են Հայ Եկեղեցու անդաստանում:

Մեծ գոհունակութեամբ եւ հպարտութեամբ պէտք է նշեմ, որ դժուարագոյն այդ տարիների շրջանաւարտներից արժանաւորագոյնը այսօրուայ Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Գարեգին Բ. Սրբազնագոյն Հայրապետն է:

Գէորգեան հոգեւոր ճեմարանի զարգացման երրորդ շրջանը համընկնում է Հայաստանի անկախութեան հռչակման տարիներին: 1995 թ. Լուսաւորչի գահակալ դարձաւ Գարեգին Ա. կաթողիկոս Սարգիսեանը, որը մեր հասարակութեանը յայտնի էր որպէս ճանաչուած մանկավարժ եւ գիտնական: Դժբախտաբար անբուժելի հիւանդութիւնը Գարեգին Ա. Հայրապետին զրկեց ունեցած հսկայական գիտական ու մանկավարժական կարողութիւնը Հոգեւոր ճեմարանի առաջընթացին ի սպաս դնելու հնարաւորութիւնից:

Աստուածաբանական մեր համալսարանի զարգացման չորրորդ շրջանը պայմանական կերպով կարող ենք սկսել 2000-ից, երբ Հայոց Առաքելական Ս. Եկեղեցին իր բոլոր կառոյցներով երրորդ հազարամեակ մտաւ, երիտասարդ, գործունեայ եռանդով լեցուն, ազգին եւ մեր Ս. Եկեղեցուն ու Հոգեւոր ճեմարանին անմնացորդ սիրով նուիրուած Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ: Հայ Եկեղեցու զինուորների դարբնոցը՝ Հոգեւոր ճեմարանը նոր ուսումնական ծրագրով օժտելու նպատակով Նորին Սրբութիւնը գահակալումից մի քանի ամիս յետոյ՝ 2000 թ., երբ աւարտուեց ուսումնական տարեշրջանը, մանկավարժական ու դասախօսական երկարամեայ փորձ ունեցող մի խումբ մասնագետների հետ կազմեց 2000-2001 թթ. Գէորգեան հոգեւոր ճեմարանի աշխատանքային ուսումնական ծրագիրը եւ պլանները, ուր նշուած էին կրօնական, աստուածաբանական, հանրակրթական առարկաների դասընթացների բլոկները: Փորձագիտական քննութիւնից յետոյ ուսումնական ծրագրերը ներկայացվեցին Վեհափառ Հայրապետի հաստատմանը, որից յետոյ ընդունուեցին ընդկիրառութիւն Գէորգեան ճեմարանում եւ Վազգէնեան դպրանոցում: Բացի գիտականօրէն հաստատուած ուսումնական ծրագրերից՝ այդ ժամանակ կազմուեցին նաեւ ԳՀՃ-ի կանոնադրութիւնը, ընդունելութեան կանոնները, ուսանողների փոխադրման եւ այլ բուհեր տեղափոխման կարգը եւ այլ կարեւոր փաստաթղթեր: 2001, 2002 եւ 2003 ուսումնական տարեշրջանում պատշաճ մակարդակով, համակողմանիօրէն փորձարկուեցին ուսումնական ծրագրերը՝ անգամ խիստ մասնագիտական մանրուքները հաշուի առնելով: Ուսումնական 2-3 տարեշրջանների բարձր արդիւնքները ունենալուց յետոյ Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Հայրապետը յատուկ ուղերձով դիմեց ՀՀ կառա-

վարութեանը՝ ԳՀՃ-ը ճանաչելու որպէս բարձրագոյն աստուածաբանական համալսարան:

Պատասխանը չուշացաւ. 2004 թ. յունիսի 13-ին, թիւ 833 որոշմամբ, Հայաստանի կառավարութեան կողմից ԳՀՃ-ն ճանաչվեց աստուածաբանական համալսարան: Եւ այսպես, 2001-2003 թթ. շնորհազարդ Գարեգին Բ. Հայրապետի անմիջական ղեկավարութեամբ երկարատեւ ու հետեւողական աշխատանքի արդիւնքում ԳՀՃ-ը պետականօրէն ճանաչուեց աստուածաբանական համալսարան: Անգնահատելի է Վեհափառ Հայրապետի աւանդը գիտական բարձր մակարդակով ուսումնական ծրագրերի կազմման ու կիրառութեան դնելու գործում:

Ուսումնասէր եւ շատ սիրելի Վեհափառ Հայրապետ, թոյլ տուէք յիշել եւ յիշեցնել ներկաներին, որ այսօր այստեղ ենք՝ տօնախմբելու նուիրական մեր ուսումնական այս հաստատութեան 140-ամեայ պանծալի տարեդարձը: Ձեր նախորդ Գէորգ Զ. եւ Վազգէն Ա. լուսաբնակ Հայրապետներն այս աշխարհը թողեցին յոգնած եւ դառնացած հոգով, որովհետեւ նրանց երբեք թոյլ չտրուեց Հոգեւոր ճեմարանը որակապէս ու քանակապէս բարձրացնելու այն մակարդակին, որին ձգտում էին նրանք:

Այսօր, երբ պատմականօրէն ամեն ինչ մնացել է անցեալում, թոյլ տուէք հաստատել, որպէս ականատես, որ Ձեր նախորդ երջանկայիշատակ հայրապետները սարսափի ու վախի պայմաններում պահպանեցին Մայր Աթոռը, Հայոց Եկեղեցին եւ նուիրական մեր այս ուսումնական հաստատութիւնը: Փառք ու պատիւ նրանց: Համոզուած եմ, որ հանգիստ են նրանց վիրաւոր եւ տառապած հոգիները, որովհետեւ նրանց ծրագրածն ու երազածը Ձերդ Սրբութիւնն իրականութիւն դարձրեց:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառի շրջահայեաց ղեկավարութեամբ հոգեւոր վերածնունդի լուսաւոր շրջան են ապրում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Մեր Աստուածաբանական համալսարանի գոյութիւնը եւ սաներին տրուած հոգեւոր բարձրակարգ կրթութիւնը մեր Սուրբ Եկեղեցու զարթօնքն ապահովելու երաշխիքն է: Հոգեւոր Ճեմարանի լաւագոյն շրջանաւարտների միջոցով է, որ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին պիտի դառնայ կենդանի եւ անհրաժեշտ սրբազան հաստատութիւն, որ պիտի նպաստի հայ հաւատացեալ ժողովրդի հոգեւոր եւ ազգային նկարագրի անաղարտ պահպանմանը:

Կրկին անգամ շնորհաւորելով մեր ամբողջ ժողովրդին եւ բոլոր ներկաներիս Հոգեւոր ճեմարանի՝ Աստուածաբանական մեր համալսարանի 140-ամեայ պանծալի յոբելեանի առթիւ՝ վերառաքենք մեր աղօթքը տիեզերքի Արարչին, որ ընդ հովանեաւ Իւրով պահի եւ պահպանի մեր սրբազան Հայրենիքն ու Եկեղեցին, տասնամեակների քաջառողջ կեանք պարգեւի մեր սիրելի Գարեգին Բ. Սրբազնագոյն Հայրապետին՝ ի փառս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ եւ մեր ժողովրդի: